ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի շնորհանդեսը:

Անանխադեպ այս հրատարակությունը շուրջ 10-ամյա աշխատանքի արդյունք է, որի մտահղացումը պատկանում էր երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետին և «Հայկական հանրագիտարանի» գլխավոր խմբագիր, լուսահոգի Կոստանդին Խուդավերդյանին: Հայոց Մեծ դարձի 1700-ամյակին նվիրված հանրագիտարանի լույս ընծայումն իրականություն դարձավ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական հոգածությամբ, լիբանանահայ բարերարներ տեր և տիկին Ժիրայր և Հասմիկ Գաբրիելյանների մեկենասությամբ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի աջակցությամբ:

Մտվարածավալ հատորյակում ամփոփված 1000-ից ավելի հոդվածներում համապարփակ ներկայացված են Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը, նվիրապետությունը, դավանանքը, ծեսերը, տոները, հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ, ինչպես նաև Հայ Եկեղեցու պատմությանն առնչվող հոգևոր ու մշակութային բազմաթիվ նյութեր:

Հանդիսության ընթացքում Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը հղեց բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են ունեցել արժեքավոր այս հատորի հրատարակության գործում: Շնորհավորանքի և երախտիքի խոսք ասացին հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը և Տ. Շահե արքեպս. Աճեմյանը:

Շնորհանդեսի ավարտին «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո դահլիճ բերվեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որով Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշան շնորհվեց տիար Վլադիմիր Մովսիսյանին՝ Մայր Եկեղեցուն և ժողովրդին մատուցած բազմաթիվ ծառայությունների համար: Հայրապետական կոնդակով (տե՛ս էջ 4) բարձր է գնահատվում պրն Մովսիսյանի վաստակը երկրի զորացման գործում և նրա՝ առ Աստված ունեցած հավատը, որի արտահայտությունն է իր հովանավորությամբ կառուցված Սուրբ Ամենափրկիչ մատուռը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.
ՆՈՐԻՆ ՄՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՆՈԹԱՆՈՒՄ Է ՆՈՐ ԼՈՒՅՍ ԸՆՇԱՅՎԱԾ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻՆ